ԿԱՐԾԻՔ

Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի ,,Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները,, թեմայով ատենախոսության ԺԹ.00.03 ,,Սոցիալական հոգեբանություն,, մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության:

Դեռահասության տարիքն անձի զարգացման փուլերի տեսանկյունից հանդիսանում է շատ պատասխանատու և սոցիալ-հոգեբանական լուրջ դժվարություններով ուղեկցվող ժամանակաշրջան: Մանկությունից դեպի պատանեկություն անցման այս տարիքային փոուլը հանդիսանում է ձևավորվող անձի սոցիալականացման, ինքնահաստատման, աշխարհի, բնության, մարդկային արժեքների, հարաբերությունների, ճանաչման հետաքրքիր, պատասխանատու ինչպես նաև ճգնաժամերով ուղեկցվող տարիքային փուլ: Այս տեսանկյունից՝ մի դեպքում դրանք հանդիսանում են ինքնուրույնության հասնելու բնականոն գործընթացներ, մյուս կողմից այդ ճանապարհը ուղորդվում է իր հետ տեղի ունեցող բազմաթիվ հոգեֆիզիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, անատոմիական ,,անհասկանալի,, փոփոխություններով, իր և իր միջավայրի միջև օրեցօր ավելացող հակասություններով ու տեսանելի և քողարկված հակասությունների բազմազանությամբ, որոնք հանգեցնում են սոցիալ-հոգեբանական նորագոյացությունների, վարքային կտրուկ փոփոխությունների, ինչպես նաև դեստրուկտիվ վարքի ձևավորման հավանականության:

Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի ,,Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները, թեմայով ատենախոսությունը, դրանում առաջադրված նպատակն ու խնդիրները հանդիսանում են խիստ արդիական և գիտական առումով հետաքրքիր, քանզի ժամանակակից աշխարհաքաղաքական, տարածաշրջանային բուռն զարգացումները, դրանց հետ կապված դժվարությունները

անհետևանք չեն անցնում դեռահասության շրջանում գտնվող երեխաների աշխարհընկալման, նրանց գիտակցության զարգացման գործընթացների վրա: Դեռ ավելին, Ժամանակակից տեղեկատվական տեխնալոգիաների գոյության պայմաններում դեռահասության տարիքում գտնվող տղաներն ու աղջիկները առընչվում են ամենատարբեր ,,ճշմարտությունների,, հետ, որոնք նոր խնդիրներ են առաջադրում նրանց, հաճախ իրարամերժ ու անհասկանալի: Մյուս կողմից՝ դեռահասության տարիքի ճգնաժամը, ինչպես նաև նրա անձի ինքնահաստատման հիմնախնդիրը մարդաբանական գիտությունների, հատկապես հոգեբանական գիտությունների համար հանդիսանում են առանցքային և կարևոր:

Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի ,,Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները,, թեմայով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու տեսական խնդիրների վերլուծական գլուխներից և երրորդ՝ Սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան և դեռահասության ճգնաժամի առանձնահատկությունները,, հիմնախնդիրների հետազոտական գլխից: Օգտագործվել է 114 մասնագիտական գրականության աղբյուրներ, որոնցից՝ 5-ը հայերեն, 81-ը ռուսերեն և 29-ը անգլերեն լեզվով քննարկվող հիմնախնդրին վերաբերվող գիտական աշխատություններ: Աշխատանքում առկա են գործնական առաջարկություններ և հավելվածներ:

Ներածության բաժնում արտացոլված են ,,Դեռահասության ճգնաժամը և սեռային ինքնահաստատման առանձնահատկությունները,, հիմնախնդրի արդիականության, գիտականության և դրանց կիրառական նշանակության հիմնավորումները, ատենախոսական աշխատանքի տեսական և գիտա-կիրառական հիմքերը, նպատակն ու խնդիրները, վարկածը, պաշտպանության ներկայացվող դրույթները: Ներկայացված են նաև հետազոտության մեթոդներն ու կազմակերպման, իրականացման իրադրական ու ռազմավարական նպատակահարմարությունները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը: Առաջադրվող բոոր խնդիրների լուծումները իրականացվում են ատենախոսական աշխատանքի կոնցեպտուալ հիմքում ընկած գիտնականների առաջավոր գաղափարների հիման վրա

Ներածության մեջ արտացոլված ձևակերպումներն ու դրույթները կատարված են գրագետ հայերենով, դրանցում արտացոլվում են յուրաքանչյուր դրույթի ձևակերպման գիտական պահանջներն ու ատենախոսություններին ներկայացվող բովանդակային կողմերը, լեզվական օրենքների պահպանման նրբությունները, հաշվարկների հավաստիության ու կիրառականության անհրաժեշտությունների հիմնարար դրսևորումները:

Ատենախոսական աշխատանքի ,,Դեռահասության ճգնաժամը և անձի ինքնահաստատման հիմնախնդիրը,, տեսական առաջին գլխում Սաթենիկ Դանիելյանը մանրազնին վերլուծությունների շնորհիվ վեր է հանում հայրենական և արտասահմանյան գիտնականների հետազոտությունների առաջավոր գաղափարները, հիմնախնդրի տեսական և գիտակիրառական խնդիրների լուծման հեղինակային մոտեցումները, տարբեր տեսակետների ընդհանրություններն ու խնդիրների լուծման արդյունավետ եղանակները, դրանց աժմեականության, հրատապության հիմնավորումները:

Մասնավորապես կարևորվում են Շ. Բյուլերի,Ա. Պրիխոժանի, Ա. Ֆրոյդի, Ն. Տոլստիխինի այն տեսակետները, որ դեռահասության շրջանի ճգնաժամը պայմանավորված է սեռական հասունացման և այդ շրջանում նրա օրգանիզմում տեղի ունեցող առանձնահատուկ տեղաշարժերով, ներքին հակասությունների բուռն դրսևորման բնութագրերով: Հեղինակը վերլուծությունների շնորհիվ առանձնացնում է դեռահասության տարիքային փուլերում գտնվող տղաների և աղջիկների սոցիալ-հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, օրգանական հակազդումների յուրահատկություններն ու միջփուլային՝ անցումային ժամանակահատվածներում տեղի ունեցող սեռային յուրահատուկ տեղաշարժերի հավանական զարգացումների հեռանկարները, դրանց ուղորդման ու վերահսկման անհրաժեշտ մոտեցումները: Այնուհետև հեղինակը անդրադառնում է Լ.Վիգոտսկու աշխատանքների վերլուծություններին, որոնցում կարևորվում են դեռահասի հետաքրքրությունների փոփոխության հետ կապված նրա հոգեկանում տեղի ունեցող յուրահատուկ սոցիալ-հոգեբանական տեղաշարրժերը: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Ս.

Դանիելյանը վերլուծական անցումներով հստակեցնում է հիմնախնդրի նկատմամբ տարբեր հեղինակների գաղափարական և գիտական առաջնահերթությունները, ժամանակագրական գործոններն ու գիտական դպրոցների յուրահատկությունները:

Այսպես, վերլուծելով հոգեվերլուծական դպրոցների տեսակետները, դեռահասության ֆոգեֆիզիոլոգիական, սոցիալական ակտիվության դրսևորումները դիտարկվում են որպես բնազդային հակումներ: Դրանց չհակասելով, հեղինակը ներկայացնում է նաև դեռահասության ճգնաժամի և սեռային ինքնահաստատման առանձնահատկություններով հետաքրքրվող հոգեբանական մյուս դպրոցների տեսակետները /Հ Ռեմշմիդտի, Վ.Մուխինայի, Լ.Վիգոտսկու, Ժ.Պիաժեի, Ի. Մալկինա-Պիխի մոտեցումները/: Այնուհետև հեղինակը վերլուծում է դեռահասների ինքնահաստատման խնդրին առնչվող փիլիսոփայական, մանկավարժական, ֆիոլոգիական, հոգեբանական, դպրոցների գիտնականների աշխատանքները /Ֆ. Նիցշե, Շոպենհաուեր, Վ.Եվստրատովա, Լ.Կոգան, Ա.Ադլեր, Կ.Հորնի, Ա. Մասլոու, Կ.Լևին, Գ.Օլպորտ և այլն./ որպես ձևավորվող անձի բեկումնային շրջանի կարևորագույն հիմնախնդիր, ինչը լրացնում և ամբողջականացնում է դեռահասության ճգնաժամի և անձի ինքնահաստատման հիմնախնդիրի վերաբերյալ պատկերացումների ամբողջականությունը:

Ատենախոսության տեսական խնդիրների ուսումնասիրման երկրորդ՝ ,,Սեռային ինքնահաստատման դժվարությունները և դեռահասության ճգնաժամը,, գլխում ուսումնասիրվում են դեռահասների սեռային ինքնահաստատման էությանը, ինչպես նաև դրանց հիմնական առանձնահատկություններին վերաբերվող առաջավոր գիտնականների տեսակետները: Ս. Դանիելյանի դիտարկումներում դեռահասների սեռային ինքնահաստատման հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեն ամենատարբեր տեսակետներ: Մասնավորապես՝ կան գիտնականներ, որոնք դեռահասների ինքնահաստատման առանձնահատկություններն ուսումնասիրելիս անտեսում են սեռային ինքնահաստատումը /Ե.Խառլամենկովա, Լ.Ռապապորտ, Վ.Բառանենկո և այլոք/: Այնուհետև հեղինակը անդրադառնում է անձի ինքնահաստատման հիմնախնդրի տարաբնույթ մեկնաբանումներին, դրանց

մեխանիզմների վերլուծությանը, տարբեր հեղինակների տեսակետների քննարկումներին /Է. Ֆրոմ, Ե. Սոկոլինսկայա, Ն. Դվորյանչիկով, Ի.Կոն, Ն. Խառլամենկովա և այլն/: Հեղինակի կողմից դեռահասի սեռային ինքնահաստատումը հոգեբանական վերլուծությունների արդյունքում դիտարկվում է որպես երեխայի անձի և ուրիշների աչքում սեփական անձի արժեվորում, որպես տղամարդ, կամ կին, ինչպես նաև իր շրջապատում սեռային առումով որոշակի դիրքի ձեռքբերում և վերաբերմունքի ձևավորում: Այնուհետև հեղինակը անդրադարձ է կատարում սեռային ,,Ես կոնցեպցիայի,, մեկնաբանումներին, որպես ինքնագնահատում և ինքնահաստատում ընդհանրապես, որոնց մեկնաբանումները տեղ են գտել բազաթիվ հեղինակների ուսումնասիրություններում /Ս.Խուդոյան, Գ. Ցուկերման և այլն/:

Նույն գլխի ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիային վերաբերվող ենթագլխում ֆրուստրացիան վերլուծվում է ինչպես հոգեբանական խնդիր, այնպես էլ որպես պահանջմունքների չիրականացման արդյունքում ձևավորված հոգեվիճակ: Այնուհետև ներկայացվում են հեղինակների աշխատանքներում քննարկվող հիմնախնդրի ամենատարբեր բնութագրեր /Ֆ.Վասիլյուկ, Ա.Մասլոու, Ա. Մակլակով, Կ. Լևի, Ս.Ռոզենցվեյկ և այլն/, որոնք իրականացվել են վերջին ժամանակներում:

Տեսական վերլուծությունների երկրորդ գլխում վերլուծությունների շնորհիվ վեր են հանվում նաև դեռահասների սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիայի և դեռահասության ճգնաժամի վերաբերյալ հայրենական և արևմտյան դպրոցների մեկնաբանումները, առանձնահատկությունները, դրանց պատճառ-հետևանքային կողմերը, տարատեսակները: Այնուհետև ներկայացվում են ատենախոսական աշխատանքի տեսական վերլուծությունների գիտական, մեթոդաբանական հիմնավորումները, ինչպես նաև վարկածի առաջադրման և դրա հաստատվելու կամ մերժվելու գիտական հիմնավորումները:

,,Սեռային ինքնահաստատման պահանջմունքի ֆրուստրացիան և դեռահասության ճգնաժամի առանձնահատկությունները,, էմպիրիկ հետազոտություններին ուղղված երրորդ գլխում Ս. Դանիելյանը ներկայացնում է հետազոտական աշխատանքների ծրագիրը, հետազոտության փուլերը,

հետազոտության իրականացման առանձնահատկությունները, հետազոտության խնդիրները, մեթոդաբանական պահանջները, մեթոդական գործիքակազմն ու հետազոտվող համակազմը: Հարկ է նշել, որ հետազոտական ապարատը իր կառուցվածքով, իրականացման ռազմավարությամբ ու արդյունքների հաշվարկման վիճակագրական մեթոդների համապատասխանելիությամբ, հանդիսանում է կուռ համակարգ, որով հնարավոր են իրականացնել առաջադրված նպատակի և խնդիրների արդյունավետ լուծումները:

Հետազոտությունների իրականացման արդյունավետության ապահովման նպատակով հեղինակը նպատակահարմար է գտել գործընթացը սկսել զրույցի մեթոդով, որը հնարավորություն է տալիս համակազմի հետ ստեղծել աշխատանքային մթնոլորտ, ինչպես նաև ապահովել առաջադրվող խնդիրների իրականացման պահանջները: Զրույցի ընթացքում արծարծվում են այնպիսի խնդիրների վեր հանում, որոնք առաջադրված հիմնախնդրի բազմակողմանի ուսումնասիրման համար չեն կարող արտացոլվել տեստային մեթոդներում: Բացի այդ, զրույցի մեթոդը հնարավորություն է տալիս մասնակիցներին հետազոտության նկատմամբ դրական վերաբերմունքի, բարձր մոտիվացիայի ձևավորմանը: Այնուհետև ներկայացվում են հետազոտության արդյունքների քննարկումն ու դրանց հոգեբանական վերլուծությունները, արվում համապատասխան հետևություններ, եզրակացություններ: Պահպանելով հետազոտության նպատակի իականացման պահանջներն ու վարկածի տրամաբանությունը, Ս. Դանիելյանը մեթոդաբանական անցում է կատարում, փոխելով հետազոտության գործիքակազմը, զրույցից անցնելով թեստային համակարգին, աստիճանական կերպով համակազմին սահուն ներառելով անհամեմատ բարդ, բայց և հետաքրքիր հետազոտական գործընթացների մեջ: Հատկանշական է, որ Դեռահասության ճգնաժամի սրության և նրանց ինքնահաստատվածության մակարդակի առանձնահատկությունների հետազոտությունները իրականացնելիս հեղինակը կիրառել է բնագավառում ճանաչված գիտնական, պրոֆեսոր Ս.Խուդոյանի մշակած համակարգը, որը իր կիրառականությամբ և մասնագիտական առումով բարձր տեղեկատվությամբ, հանդիսանում է գիտական շրջաններում ընդունված լավագույն

գործիքակազմ: Այնուհետև հեղինակը ներկայացնում է գունային թեստերի, ֆրուստրացիայի մակարդակի որոշման թեստերի, դեռահասների ինքնահաստատման հարցարանների, պրոյեկտիվ մեթոդների կիրառման, ճգնաժամի սրության և դեռահասի ինքնահաստատվածության մակարդակների հետազոտության հարցարանների և ինքնանկարների կիրառման: Այնուհետև ուսումնասիրվում են դեռահասների սոցիալական ֆրուստրացվածության մակարդակը, դեռահասի և նրա ընկերների ու ընտանիքի անդամների միջև հարաբերությունների առանձնահատկությունները, որոնց արդյունքները ներկայացվում են աղյուսակների, հիստագրամների, նկարների, դիագրամների տեսքով: Վերլուծություններում ուրվագծվում են հեղինակի գիտական ճկուն միտքն ու նրա մասնագիտական էթիկան, հետևությունների ու եզրակացությունների ձևակերպման բարձր մշակույթը, որը բարձրացնում է կատարված աշխատանքների գիտագործնական նշանակությունը: Հատկանշական է այն հանգամանքը, որ բոլոր մեթոդների կիրառման արդյունքում ստացված տվյալները վարկածի պահանջներին համապատասխան համեմատական վերլուծությունների շնորհիվ վեր են հանվում դեռահասության տարիքի ճգնաժամային հատկանիշներն ընդգծող առանձնահատուկ հոգեբանական արժեքները, մեկնաբանվում դրանց իմաստային նշանակելիությունները, արվում անհրաժեշտ հետևություններ և եզրակացություններ:

Դեռահասների սեռային ինքնքհաստատման, նույնականացման գործընթացներում հետազոտությունների շնորհիվ բացահայտված երևույթները մեկնաբանվում են ինչպես բնագավառում հայտնի գիտնականների տեսական գաղափարների շնորհիվ, այնպես էլ սեփական փորձի ու դատողությունների հիման վրա: Հետազոտության արդյնքների ընդհանրացման շնորհիվ ատենախոսը կարողացել է իրականացնել մի շարք կարևոր եզրակացություններ, որոնք տեղ են գտել աշխատանքն ամփոփող սույն բաժնում: Աշխատանքն ավարտվում է հեղինակի կողմից իրականացված տեսական և էմպիրիկ հետազոտությունների հիման վրա արված առաջարկություններով, որոնք կարող են հաջողությամբ կիրառվել դեռահասների հետ տարվող հոգեբանական ուղեկցման և վերահսկողական աշխատանքներում:

Ատենախոսական աշխատանքը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն աշխատանք: Սակայն աշխատանքը զերծ չէ բացթողումներից, առանձին թերություններից, որոնց մասին կուզեինք նշել:

1. Հետազոտության համակազմում ընդգրկվել են հայեր, ռուսներ, վրացիներ, հրեաներ: Ենթադրվում է, որ հետազոտողին պետք է որ հետաքրքրեր հետազոտվող երևույթների էթնիկական առանձնահատկությունները, ընտանեկան դաստիարակության, դեռահասների նկատմամբ ծնողների վերաբերմունքի դրսևորման առանձնահատկությունները, դրանց տարբերությունները:
2. Հետազոտությանը մասնակցել են 11-16 տարեկան աղջիկներ և տղաներ: Սակայն վերլուծություններում հստակ լուսաբանված չեն տղաների և աղջիկների արդյունքներն առանձին առանձին, ինչպես նաև լուսաբանված չեն անցումային ենթափուլերում գտնվող դեռահասների /օրինակ՝ 11-13, 13-15,15-16/ ցուցանիշները, կապված տարիքային ճգնաժամերի, սեռային ինքնահաստատման, ֆրուստրացվածության և այլ երևույթների հետ:
3. Ատենախոսական աշխատանքում տեղ են գտել օտար լեզուներով հասկացություններ, դարձվածքներ, որոնց համարժեքը կան նաև հայերենում: Կարծում ենք նպատակահարմար կլիներ դրանց հայերենի օգտագործումը:

Արված դիտողությունները բոլորովին չեն արժեզրկում Սաթենիկ Դանիելյանի ատենախոսական աշխատանքի բովանդակությունն ու գիտական արժանիքները: Ատենախոսական աշխատանքը արժեվորվում է գիտական նորույթով, դրա տեսական և հետազոտական ուսումնասիրություններում տեղ գտած արդյունքների գիտականությամբ և կիրառական բարձր նշանակությամբ: Սեղմագրի բովանդակությունը և հիմնական դրույթների գիտական ձևակերպումները համապատասխանում են ատենաոսության բովանդակությանը:

Ատենախոսական աշխատանքը իր բովանդակությամբ, տեսական վերլուծությյուններով, հետազոտական աշխատանքների հստակությամբ, արդյունքների մշակվածության և եզրակացությունների ձևակերպման գիտականությամբ լիովին

համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին:

Առաջադրված նպատակի իրականացման և խնդիրների լուծման արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը վկայում է հեղինակի կողմից հիմնախնդրի տիրապետման և մասնագիտական մեծ կարողությունների մասին:

Ատենախոսական աշխատանքի հեղինակ Սաթենիկ Հովհաննեսի Դանիելյանի իր կողմից ներկայացված ,, Դեռահասության ճգնաժամը և սեռայիրն ինքնահաստատման առանձնահատկությունները,, թեմայով ԺԹ.00.03 ,,Սոցիալական հոգեբանություն,, մասնագիտությամբ ատենախոսության համար արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Հոգեբանական գիտությունների դոկտոր՝ Մ.Պ.Մկրտումյան

ՀՊՄՀ-ի գիտքարտուղար Մ. Իսպիրյան

Հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ.Պ.Մկրտումյանի ստորագրությունը հաստատում եմ: